ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 23.09.2025թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արուսյակ Գևորգյան
	Նելլի Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հարցում է եկել հետևյալ բովանդակությամբ՝

Հարցում 1- Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, պատվիրատու՝ Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 71-րդ չափաբաժնով սահմանված դեղի (այն է՝ Յոհեքսոլ) համար, աճուրդի հրավերով սահմանվել է հետևյալ, տեխնիկական բնութագիրը՝ Յոհեքսոլ iohexol լուծույթ ներարկման 755մգ/մլ (350մգ յոդ/մլ), 200մլ շշիկ: «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նշված բնութագրերը պետք է նաև ապահովեն հավասար մրցակցային պայմաններ և չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաև լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) նույն ակտիվ բաղադրատարրով, բացի «Օմնիպաք» 350մգ յոդ/մլ; (10) պլաստիկե սրվակներ 200մլ դեղից ներառված են նաև «Օմնիպաք» 350մգ յոդ/մլ; (10) պլաստիկե սրվակներ 50մլ և 350մգ յոդ/մլ; (10) պլաստիկե սրվակներ 100մլ, ինչպես նաև «Բիեմեքսոլ» 350մգ յոդ/մլ; ապակե սրվակ 100մլ: Տվյալ դեղերն ինչպես «Գնումների մասին» և «Դեղերի մասին» օրենքների այնպես էլ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերի իմաստով հանդիսանում են համարժեք, տարբերությունը կայանում է միմիայն դրանց թողարկման ձևերի մեջ, որոնք են՝ 50 մլ, 100մլ և 200մլ, համապատասխանում են նույնիսկ բոլորի դեղաչափերը՝ 350մգ յոդ/մլ, ինչպես որ պահանջում է աճուրդի բնութագիրը: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ խնդրում եմ տրամադրել պարզաբանում առ այն, թե ինչով է պայմանավորված պատվիրատու Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից քննարկվող դեղի բնութագրում դեղի թողարկման ձևի (200մլ) վերաբերյալ առանձնահատուկ նշումը, որն ինքնին արհեստական խոչընդոտ է ստեղծում ՀՀ-ում գրանցված համարժեք մնացյալ դեղերով աճուրդին մասնակցության համար, որոնք է ակտիվ բաղադրիչը, նույն դեղաչափը և կիրառման նույն ճանապարհը:

Գնահատող հանձնաժողովը ներկայացրել է հետևյալ պարզաբանումը՝

Պարզաբանում չի տրամադրվել, քանի որ հարցումը դուրս է հրավերի բովանդակությունից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխան են,** բացառությամբ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի, «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի, «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի և «Քրոմիտ» ՍՊԸ-ի կցած հայտերի, մասնավորապես՝

- «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կցած հայտի Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 40-րդ չափաբաժնի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը նշված չէ:
- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կցած հայտի Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակեցնել 71-րդ չափաբաժնի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:
- «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կցած հայտի Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 46-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը լրացված է սխալ:
- «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կցած հայտի Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակեցնել 16-րդ չափաբաժնի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:
- «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի կցած հայտի Հավելված 1.3 –ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/ կցված է նախորդ տարվա հայտարարագիրը:
- «Քրոմիտ» ՍՊԸ-ի կցած հայտի Հավելված 1.3 –ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/ կցված չէ:

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և կցել շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի սեպտեմբերի 25-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Արսենյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արուսյակ Գևորգյան

Նելլի Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն